

Ա. Կորնթացիս 15:56-58 (1 Corinthians 15:56-58)

«Յաղթութիւն Յիսուսով»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 01.17.98

Պիտի կարդանք Առաջին Կորնթացիս 15:56-58 երորդ համարները:
*Մահուան խայթոցը մեղքն է, ու մեղքին ոյժը օրէնքը: Բայց
գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կու տայ մեր Տէր
Յիսուս Քրիստոսին ձեռքով: Ուստի, իմ սիրելի եղբայրներս,
հաստատուն եւ անշա՛րժ կեցե՛ք եւ ամէն ատեն աւելցե՛ք Տէրոջը
գործին մէջ, գիտնալով թէ ձեր աշխատութիւնը պարապ չէ
Տէրոջմով:*

Երբ մեղու մը խայթէ անձ մը, խայթոցը կը մնայ մորթէն ներս:
Հիմա մեղուն խայթոց չունի եւ մանուկ մը հետը կրնայ խաղալ
առանց վտանգի: Պողոս Առաքեալ կըսէ, մահը խայթեց Յիսուս
Քրիստոս:

Խաջին վրայ, Յիսուս մեզի համար մեռաւ, կոելով մեր մեղքերուն
պատիժը: Երբ կընդունինք Յիսուս որպէս մեր Փրկիչը, մահը
չկրնար վնասել: Յաղթութիւն ունինք, նայել յաւիտենական կեանք,
Յիսուս Քրիստոսով: Միշտ յոյս եւ վստահութիւն ունինք կեանքի
մէջ, քանի որ Յիսուս յաղթական է:

Ո՞ր փորձառութիւնը ամէնէն դժուարն է քեզի համար -
անոթութի՞ւն - մի՞նակութի՞ւն - վ՞ախ - յուսալքո՞ւմ -
մտահոգութի՞ւն: Մեր կեանքը պայքար է - տան մէջ - եկեղեցիին
մէջ - շրջապատին մէջ: Մահը ամէնէն դժուար փորձառութիւնն է:
Յիսուս մահուան խայթոցը նաշակեց խաջին վրայ - բայց յաղթեց
մահուան յարութիւնով:

Պողոս Առաքեալ կը գրէ, «Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեզի
յաղթութիւն կու տայ մեր Տէր Յիսուս Քրիստոսին ձեռքով:» Այս
խոստումը մեզի համար է այսօր: Յիսուս մեզի տուած է
յաղթութիւն ուրեմն Իրեն վստահինք, նաեւ Իրեն տանինք մեր
դժուարութիւնները:

Պողոս Առաքեալ կը Քաջալերէ մեզ որ կը վկայենք մեր յաղթութիւնը
Յիսուս Քրիստոսով:

Տարիներ անաչ երբ կը խաղայի - եկեղեցիի “softball” խումբին հետ - յաղթեին կամ ոչ - այս երգը կ'երգեին - «Յաղթութիւն Յիսուսով»:

Կրկներգը այսպէս է, «Յաղթութիւն Յիսուսով, Փրկիչս յաւիտեան, զիս փնտոնեց եւ զնեց Իր փրկարար արիւնով, զիս սիրեց զինք գիտեմ, բոլոր սերըս Իրնէ - զիս մագրեց յաղթեցի Իրեն սուրբ արիւնով:»

Միշտ կուզէի գիտնալ թէ միւս խումբերը ի՞նչ կը խորհէին մեր մասին:

Երկու շաբաղ անաչ “49rs” խաղցան “Green Bay”ի հետ: Terrell Owens լաւ չէր խաղար - սխալներ կրներ: Բայց երկվայրկեաններուն մէջ գնդակը փոնեց եւ իր խումբը յաղթեց: Խաղէն ետք Terrell Owens ըսաւ, *«կուզեմ շնորհակալութիւն յայտնել Յիսուսին որ ինձի տուաւ այս առիթը:»*

Ամէն օր Աստուած մեզի առիթներ կուտայ որ Իրեն համար ապրինք - հակառակ մեր պարագաներուն: Պողոս Առագիալ կըսէ, *«հաստատուն կեցե՛ք գիտնալով թէ ձեր աշխատութիւնը պարապ չէ Տէրոջմով:»*

Այսօր, ինչ որ էն մեր պարագաները - Աստուծոյ վստահինք Իր յաղթութեան համար - նաեւ ուրիշներու վկայենք Աստուծոյ յաղթութիւնը մեր կեանքով: